Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 384 - Ա որոշման

«Փոստային ծառայություններ երեխաների հովանավորության ծրագրի շրջանակներում»
ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի հիմնական նպատակն է ստեղծել բարեկեցիկ միջավայր երեխաների համար՝ համայնքային զարգացման այնպիսի ծրագրեր իրականացնելու միջոցով, որոնցում մեծ դեր ունի երեխաների և նրանց հովանավորների միջև սերտ նամակագրությունը:
2	Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	1. «Վորլդ Վիժն» ԱՄՆ-ի աջակցող գրասենյակ հասցե՝ 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001 հեռախոս՝ +1-888-511-6548 2. «Վորլդ Վիժն» Շվեյցարիայի աջակցող գրասենյակ հասցե՝ World Vision Switzerland, Kriesbachstrasse 30, CH-8600 Duebendorf, Switzerland, հեռ.՝: +41-44-510-1579 3. «Վորլդ Վիժն» Ֆրանսիայի աջակցող գրասենյակ հասցե՝ 7 rue Pasquier - 75008 Paris, հեռախոս՝ +33-1-48-03-92-42 4. «Վորլդ Վիժն» Թայվանի աջակցող գրասենյակ հասցե՝ 6F, 133, Sec. 4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan հեռախոս՝ 886-2-2175-1995
4	Ծրագիրը կատարողը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝ +37460491010
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրն է հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Կապանի և Ապարանի տարածքային զարգացման ծրագրերում ընդգրկված համայնքները: Ծրագրի բնագավառը՝ սոցիալական:

6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 45,186,120 (քառասունհինգ միլիոն հարյուր ութսունվեց հազար հարյուր քսան) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
7	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող են հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Կապանի և Ապարանի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված համայնքներում բնակվող երեխաները: Երեխաների տվյալների հավաքագրման ժամանակ կնքվում է երկկողմանի համաձայնագիր, որը հաստատում է տվյալ երեխայի ծնողի համաձայնությունը՝ երեխաներին ՎՎՀ-ի կողմից տվյալ համայնքում իրականացվող ծրագրերում ընգրկելու մասին:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	15 մայիս, 2021 թ. – 14 մայիս, 2023 թ.
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի նպատակին հասնելու համար սերտ նամակագրական կապ է հաստատվում համայնքներում բնակվող 18,000 երեխաների և ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի և Թայվանի անհատ հովանավորների միջև, որի արդյունքում Հայաստանի երեխաների համար ստեղծվում են հնարավորություններ շփվելու և ճանաչելու այլ երկրներում ապրող մարդկանց, ծանոթանալու նրանց մշակույթին և սովորույթներին, իսկ հովանավորների համար ստեղծվում են հնարավորություններ ֆինանսական աջակցություն ցուցաբերել այդ երեխաների բնակության համայնքներում՝ զարգացման ծրագրերի իրականացման միջոցով: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հովանավորության ծրագրի մեխանիզմը հանդիսանում է ոչ թե անհատական ֆինանսական աջակցություն անհատ երեխաներին, այլ հովանավորներից ստացված ֆինանսական ռեսուրսների միավորում՝ համայնքային զարգացման ծրագրերի իրականացման համար, որից կօգտվեն ոչ միայն երեխաները, ում անունով հովանավորները գումարներ են հատկացնում, այլև համայնքի բոլոր երեխաները: Հովանավորների կողմից ֆինանսավորված համայնքային ծրագրերի վերաբերյալ տեղեկություններ հովանավորները ստանում են հաշվետվություններից և ավելի հստակ պատկերացում են կազմում իրենց տրամադրած միջոցների շնորհիվ համայնքներում կատարված բարեփոխումների մասին:

<table>
<tr><td></td><td></td><td>Նամակագրության թարգմանությունը իրականացվում է Երեխաների հովանավորության ծրագրի աշխատակիցների կողմից:
Այդ միջոցառումներն իրականացնելու համար տարեկան ծախսվում է 45,186,120 (քառասունհինգ միլիոն հարյուր ութսունվեց հազար հարյուր քսան) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Ծրագրի ընդհանուր արժեքը երկու տարվա համար կազմում է 45,186,120 (քառասունհինգ միլիոն հարյուր ութսունվեց հազար հարյուր քսան) ՀՀ դրամ ՝ առանց ԱԱՀ-ի:</td></tr>
<tr><td>10</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>Ծրագիրը ներառում է հետևյալ աշխատանքները.
<table>
<tr><th>Գործողություն</th><th>Ժամկետ</th><th>Գումար ՀՀ դրամ յուր. տարվա համար</th><th>Գումար ՀՀ դրամ յուր. տարվա համար</th></tr>
<tr><td>“Հայփոստ” ՓԲԸ-ի միջոցով փոստային ծառայությունների իրականացում</td><td>15.05.2021 - 31.07.2021
15.05.2022 - 31.07.2022</td><td>13,521,060</td><td>9,072,000</td></tr>
<tr><td>“Հայփոստ” ՓԲԸ-ի միջոցով փոստային ծառայությունների իրականացում</td><td>01.08.2021 - 30.10.2021
01.08.2022 - 30.10.2022</td><td>4,507,020</td><td>3,024,000</td></tr>
<tr><td>“Հայփոստ” ՓԲԸ-ի միջոցով փոստային ծառայությունների իրականացում</td><td>01.11.2021 - 01.01.2022
01.11.2022 - 01.01.2023</td><td>4,507,020</td><td>3,024,000</td></tr>
<tr><td>“Հայփոստ” ՓԲԸ-ի միջոցով փոստային ծառայությունների իրականացում</td><td>01.02.2022 - 14.05.2022
01.02.2023 - 14.05.2023</td><td>4,507,020</td><td>3,024,000</td></tr>
<tr><td colspan="2">Ընդամենը յուրաքանչյուր տարվա համար՝</td><td>27,042,120</td><td>18,144,000</td></tr>
<tr><td colspan="3">Ընդամենը երկու տարվա համար՝</td><td>45,186,120</td></tr>
</table></td></tr>
<tr><td>11</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր ներկայացված ծրագրով նախատեսված չեն:</td></tr>
</table>

	կազմակերպական ծախսերը	
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման և այլ մարմինների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման շրջանակներում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է գյուղական և քաղաքային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև համայնքներում գործող դպրոցների և մանկապարտեզների հետ:
13	Ծրագրի արդյունավետու-թյան նկատմամբ վերա-հսկողության մեխանիզմ-ների նկարագրությունը	«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին տարեկան հաշվետվությունները կներկայացվեն Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

13.05.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ